ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 1

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի թիվ 1 նիստի

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ
5. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N81-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի նիստերի ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N2 ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆԻՍՏԵՐԻ

| Հ/Հ | ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ |
|---|---|
| 1 | 2017 թվական, հունվարի 11 |
| 2 | 2017 թվական, փետրվարի 18 |
| 3 | 2017 թվական, ապրիլի 4 |
| 4 | 2017թվական, մայիսի 30 |
| 5 | 2017 թվական, հունիսի 27 |
| 6 | 2017 թվական, օգոստոսի 26 |
| 7 | 2017 թվական, հոկտեմբերի 20 |
| 8 | 2017 թվական, դեկտեմբերի 16 |

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Նաիրի 2Ա
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 3-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՔԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2017-2021ԹԹ.

# ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար Է.Հովհաննիսյանը

Հաստատվել է համայնքի ավագանու 11.01.2017թ. թիվ 3-Ն որոշմամբ

Մուսալեռ համայնք – 2017թ.

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն,առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է առաջիկա հինգ տարիների ընթացքում ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում:

Համայնքի ներդաշնակ զարգացման, բնակչության սոցիալ-տնտեսական առաջընթացի ապահովման, սոցիալ-մշակութային քաղաքականության ներդրման և բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով առաջիկա հինգ տարիներին զարգացման ծրագիրը հանդիսանալու է ամենօրյա աշխատանքային փաստաթուղթ:

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

2017-2021թթ. համար համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը կազմելու գործընթացում համայնքապետարանի աշխատակազմին զգալի օժանդակություն է ցուցաբերել համայնքի ավագանու անդամների, ինչպես նաև բնակիչների մասնակցությունն ու հետաքրքրվածությունը ծրագրի, հետևաբար նաև համայնքի ներկայի և գալիք տարիների նկատմամբ: Շնորհակալություն եմ հայտնում ինչած առաջարկների, կարծիքների համար: Հավաստիացնում եմ, որ դրանք նաև համայնքի զարգացման ծրագրում են գտել իրենց տեղը:

Այսպիսով գալիք հինգ տարիների ընթացքում պատրաստվում ենք հավատարիմ մնալ մեր որդեգրած քաղաքականությանը՝ սկսած գործերը հասցնելով ավարտին և իրականացնելով նոր նախաձեռնություններ:

Ուշադրության կենտրոնում է շարունակում մնալ բնակիչների հնարավորինս բարեկեցիկ, ապահով, արժանավայել կյանքով ապահովման հարցը: Առաջիկայում համայնքում շարունակվելու են փողոցների բարեկարգման, փոսալցման և ասֆալտապատման աշխատանքները, դեռևս գիշերային լուսավորությամբ չապահովված փողոցներում ՝ լուսավորության անցկացման, նոր ձևավորվող կամ գազաֆիկացմամբ չապահովված թաղամասերի գազաֆիկացման, մշակույթի և սպորտի ոլորտում իրականացվելիք միջոցառումների միջոցով այդ ոլորտների ակտիվացման աշխատանքները, ինչը ենթադրում է նաև ներկայիս ապորտդահլիճի վերանորոգում, ֆինանսական այլ աղբյուրների ներգրավմամբ նաև մշակույթի տան վերականգնում:

Մուսալեռ համայնքը, գտնվելով երկու կարևորագույն քաղաքների՝ մայրաքաղաք Երևանի և հոգևոր կենտրոն Էջմիածնի միջև, ունի հսկայական պոտենցիալ ամենատարբեր բնագավառներում՝ սկսելով գյուղատնտեսությունից և ավարտելով բիզնես նախաձեռնություններով:

Մեկ անգամ ևս շնորհակալություն եմ հայտնում ծրագրի կազմմանը իրենց մասանակցությունն ունեցած մարդկանց՝ հույս հայտնելով ստանալ նրանց օժանդակությունը նաև ծրագրի իրագործման հարցում:

Հարգանքով՝ համայնքի ղեկավար Էդգար Հովհաննիսյան:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մուսալեռ գյուղը գտնվում է Արմավիրի մարզի արևելյան մասում ՝ Երևան-Էջմիածին մայրուղու աջ և ձախ կողմերում՝ Փարաքար և Պտղունք գյուղերի միջև:

Ծովի մակերևույթից բնակավայրի բարձրությունը 855մ է, գրանցված ամենաբարձր ջերմաստիճանը +40°C, ամենացածրը՝ -25°C:

Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 32կմ է, իսկ մայրաքաղաքից՝ 13կմ:

Գյուղի վարչական տարածքը կազմում է 652.48 հա:

Նախկինում գյուղը կոչվել է Նասիրապատ, Ներսեսապատ, Շաղրլու, Ա. Միկոյանի անունով, Գինեվետ, իսկ 1972թ-ից կրել է պատմական Մուսալեռ անվանումը:

### ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 1 | Տնային տնտեսությունների թիվը | 760 |
| 2 | բնակչությունը՝ ընդամենը | 3063 |
| | որից տղամարդիկ | 1535 |
| | որից կանայք | 1528 |
| 3 | Մինչև 6 տարեկան | 252 |
| 4 | Մինչև 18 տարեկան | 633 |
| 5 | 19-62 տարեկան | 2121 |
| 6 | 63 և բարձր | 329 |
| 7 | թոշակառուներ | 318 |
| 8 | ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքներ | 34 |
| 9 | հաշմանդամություն ունեցող անձինք | 92 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի 2016թ. տարեկան բյուջեի ընդհանուր եկամուտները հաշվարկել է 61816.7 ՀՀ դրամ, ընդհանուր եկամուտների մեջ սեփական եկամուտները՝ 18316.9 ՀՀ դրամ կամ 29.6%:

Համայնքի 2016թ. բյուջեի եկամուտների և ծախսերի ցուցանիշներն հետևյալն են

| ՀՀ | Եկամտատեսակները | 2016 | |
|---|---|---|---|
| | | նախատեսում | փաստացի |
| 1 | Շենք-շինությունների գույքահարկ | 3400 | 4133.3 |
| 2 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 7200 | 7536.2 |
| 3 | Հողի հարկ | 6800 | 5649.3 |
| 4 | Տեղական տուրքեր | 305.5 | 280.5 |
| 5 | Համայնքի սեփականություն համարվող հողի վարձավճարներ | 262.4 | 171.9 |
| 6 | վարչական գանձումներ | 700 | 255.5 |
| 7 | Համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | 137.6 | 152.3 |
| 8 | Պետական բյուջեից տրամադրվող դրույքաչափեր | 39078.8 | 39078.8 |
| 9 | Համայնքի սեփականություն համարվող հողի օտարումից մուտքեր | - | 137.9 |
| 10 | Տարեսկզբի ազատ մնացորդը | 4421 | 4421 |
| Ընդամենը | | 62305.3 | 61816.7 |

Մուսալեռ համայնքում այժմ գործում է «Մուսալեռ տպագրատուն» ՍՊԸ-ն, պոլիէթիլենային տոպրակների արտադրամասը, թռչնաֆաբրիկան, մասնակիորեն գործում է համայնքի գինու գործարանը, երկու բենզալցակայան, վեց մթերային խանութ: Նշված ձեռնարկությունների առկայությունը համայնքում հնարավորություն է տալիս շուրջ 300 բնակչի ապահովված լինել աշխատանքով հենց գյուղի ներսում:

Համայնքը չի դասվում գյուղատնտեսական մթերքներ արտադրող գյուղերի շարքին: Գյուղացիական տնտեսություններից տարիների ընթացքում հող մշակողների թիվը կրճատվել է: Համայնքային հողերը հիմնականում գերնորմատիվային են, ուստի դրանք շահավետ և ձեռնտու չեն մշակման համար: Ցրտահարությունն ու կարկտահարությունը հաճախակի գյուղացուն թողնում են առանց բերքի , իսկ ոռոգման ջրի , պարարտանյութերի և թունաքիմիկատների բարձրարժեքությունը նպաստում է գյուղատնտեսության անկմանը:

2016թ դրությամբ գյուղատնտեսական արտադրանքի ծավալը համայնքում ունի հետևյալ պատկերը:

| հհ | գյուղատնտեսական ոլորտ | ցենտներ |
|---|---|---|
| 1 | հացահատիկ և հատիկընդեղեն | 1483 |
| 2 | կարտոֆիլ | 286 |
| 3 | բանջարանոցային մշակաբույսեր | 1400 |
| 4 | բոստանային մշակաբույսեր | 1540 |
| 5 | պտուղ և հատապտուղ | 80 |
| 6 | խաղող | 2470 |
| 7 | բազմամյա խոտ | 3500 |

Անհատների կողմից գյուղում հիմնականում մշակվում են ցորեն, առվույտ, կարտոֆիլ, հատիկաընդեղեն, մշակաբույսեր, բանջարաբոստանային կուլտուրաներ: Նշված արտադրանքը մեծամասամբ իրացվում է մոտակա շուկաներում:

Համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային կոթողներ չկան:

Համայնքում գործում է համայնքային ենթակայության մեկ մանկապարտեզ, որը 1995թվականից ի վեր չէր գործում և միայն 2011 թվականին շենքի վերանորոգումից հետո վերագործարկվեց: 2015 թվականին մանկապարտեզը անվանակոչվեց «Մովսես Տեր-Գալուստյանի անվան»: Այժմ մանկապարտեզում գործում է երկու խումբ ՝ ավագ և միջին ու խառը խումբ, երեխաների թիվը՝ 71 է, իսկ աշխատակիցները 14-ն են:

Գյուղում գործում է նաև մեկ դպրոց՝ «Ֆրանց Վերֆելի անվան միջնակարգ դպրոցը», որտեղ հաճախող երեխաների թիվը 243 է: Դպրոցի աշխատակազմը բաղկացած է 30 հոգուց: Համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա՝ կազմված 10 հոգանոց աշխատակազմից:

Արտադպրոցական կրթական հաստատություններ գյուղում այժմ չկան:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված է 34 ընտանիք:

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ չկան:

Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ չկան:

Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների, համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրեր և միջոցառումներ չկան:

Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրեր, ներդրումներ և միջոցառումներ չկան:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

2017-2021թթ. ֆինանսական իրավիճակի կանխատեսումը հնարավորություն կտա առավել հստակ պատկերացնելու նշված ժամանակահատվածի համար նախատեսված ծախսերը ըստ տարիների և համապատասխան ծրագրերի:

| N | Ծրագրի անվանումը | Ֆինանսական միջոցների անհրաժեշտ քանակը /հազ. դր./ | Ֆինանսավորման աղբյուրները | | | Ծրագրի կատարման ժամկետները | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Համայնքի բյուջե /հազ. դր./ | Պետական բյուջե /հազ. դր./ | Ֆինանսավորման այլ աղբյուրներ /հազ. դր./ | 2017 թ. ֆինանսական միջոցներ /հազ. դր./ | 2018 թ. Ֆինանսական միջոցներ/հազ. դր./ | 2019 թ. Ֆինանսական միջոցներ/հազ. դր./ | 2020 թ. Ֆինանսական միջոցներ/հազ. դր./ | 2021 թ. Ֆինանսական միջոցներ/հազ. դր./ |
| 1 | Փողոցների գիշերային լուսավորության համակարգի արդիականացում | 2 600 | 2 600 | _ | _ | 600 | 500 | 500 | 500 | 500 |
| 2 | Սպորտդահլիճի վերանորոգում | 30 000 | 15 000 | _ | 15 000 | 5 000 | 15 000 | 10 000 | _ | _ |
| 3 | Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում | 70 000 | 5 000 | _ | 65 000 | 2 500 | 2 500 | 25 000 | 25 000 | 25 000 |
| 4 | Համայնքի գերեզմանատան տարածքի բարեկարգում | 2 000 | 2 000 | _ | _ | 1 000 | 1 000 | _ | _ | _ |
| 5 | Համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում | 6 000 | 2 000 | _ | 4 000 | _ | _ | 2 000 | 2 000 | 2 000 |
| 6 | Համայնքապետարանի շենքի վերանորոգում | 15 000 | 10 000 | _ | 5 000 | 2 500 | 3 000 | 3 000 | 3 000 | 3 500 |
| 7 | Համայնքի զբոսայգու բարեկարգում և նոր խաղահրապարակի կառուցում | 4 000 | 4 000 | _ | _ | 1 000 | 1 000 | 1 000 | 1 000 | _ |
| 8 | Օժանդակություն գազաֆիկացմանը | 3 000 | 3 000 | _ | _ | 1 000 | 1 000 | 1 000 | _ | _ |
| 9 | Մշակույթի տան վերակառուցում | 250 000 | 10 000 | _ | 240 000 | 2 000 | 62 000 | 62 000 | 62 000 | 62 000 |
| 10 | Համայնքի գլխավոր հատակագծի մշակում | 9 000 | 9 000 | _ | _ | _ | _ | 3 000 | 3 000 | 3 000 |

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐՆ ՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքում կան մի շարք խնդիրներ, որոնք խոչընդոտում են սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը: Ստորև կներկայացվեն մի քանի առաջնային ոլորտներ, որոնք համարում ենք համայնքի գլխավոր մարտահրավերները.

Գյուղատնտեսությունը համայնքի ուժեղ կողմերից չէ: Դա պայմանավորված է մի շարք գործոններով՝ գյուղտեխնիկայով ցածր ապահովվածություն, ոչ բերրի գյուղատնտեսական հողեր, պարարտանյութերի, թունաքիմիկատների բարձրարժեքություն, գյուղատնտեսությամբ զբաղվելու հակում ունեցող մարդկային ռեսուրսների սակավություն:

Համայնքում չկա կայուն գործող հանրային տրանսպորտ, այդ թվում դեպի մայրաքաղաք և մարզի խոշոր քաղաքներ: Նշված խնդիրը հատկապես արդիական է, քանի որ այն խոչընդոտում է բնակիչների ազատ տեղաշարժին՝ նպաստելով գյուղի և քաղաքի կապի թուլացմանը:

Նշված խնդիրը ենթակա է լուծման՝ նաև հաշվի առնելով միջհամայնքային ճանապարհների բավարար վիճակը:

Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման հարցը մշտապես համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է նախորդող տարիների ընթացքում: Փողոցներում պարբերաբար կատարվել են փոսալցման և ավազ-խճաքարով բարեկարգման աշխատանքներ: Մինչդեռ առավել մեծածավալ աշխատանքների իրականացումը պահանջում է համապատասխան ներդրումներ, ինչը սակայն չի կարող ապահովվել համայնքապետարանի կողմից:

Համայնքի նոր ձևավորվող մի քանի փողոցներ դեռևս ապահովված չեն գազաֆիկացմամբ: Հաշվի առնելով, որ դրանք ձևավորման փուլում են և ցանկանալով ավելի բարեկեցիկ կենսական պայմաններ ապահովել բնակիչների համար, հասմայնքապետարանը նախատեսում է գալիք հինգ տարիներում օժանդակություն ցուցաբերել նշված հարցի լուծմանը:

Համայնքում ներկայիս առաջնահերթ խնդիրներից մեկը մշակութային օջախների բացակայությունն է: Գյուղում եղած մշակույթի տունը, որն արդեն վաղուց չի գործում,

կիսավեր վիճակում է: Համայնքում չկան համապատասխան այլ կառույցներ՝ մշակութային կյանքի կազմակերպման համար: Նախկին մշակույթի տան վերակառուցումը համայնքի բյուջեի միջոցներով, ցավոք, հնարավոր չէ: Մշակույթի տան մի հատվածը հնարավոր է եղել պահպանել՝ համայնքի բյուջեի միջոցներով՝ նախնական պայմաններ ստեղծելով դրա՝ որպես մարզադահլիճ օգտագործմանը: Նշված շինությունների վերակառուցումը զգալիորեն կնպաստի գյուղի նաև սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացմանը: Կառույցների առկայությունը հնարավորություն կտա համայնքում մշակութային, սպորտային տարբեր խմբակների գործունեության կազմակերպմանը:

Համայնքում կարևոր հարցերից մեկը նախադպրոցական տարիքի երեխաների համար առավելագույն պայմաններ ստեղծելն է՝ նրանց բավարար զարգացման և որպես անհատ ներ ձևավորման հարցում: Դրան է միտված համայնքի մանկապարտեզի ողջ գործունեությունը : Համայնքապետարանը մշտապես ներդրումներ է կատարում կառույցի բարեկարգման , աշխատակիցների և երեխաների համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Պարբերաբար տարվող աշխատանքների մեջ պետք է նաև ընդգրկել մանկապարտեզի հերթական վերանորոգումը և շրջակայքի բարեկարգումը, ինչը կնպաստի երեխաների առօրյան առավել գունեղ և օգտավետ դարձնելուն:

Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի, բնակիչների առօրյայի կազմակերպմանն ուղղված քայլերի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում բնակիչների հանգստի և ժամանցի կազմակերպումը: Համայնքում կա զբոսայգի, որում տարվող պահպանման և բարեկարգման աշխատանքները պարբերական բնույթ ունեն:

Զբոսայգու տարածքում առավել հարմարավետ պայմանների ստեղծումը այն կդարձնի հանգստի հաճելի միջավայր՝ անկախ բնակչի սեռից և տարիքից: Հաշվի առնելով գյուղի սփռվածությունը՝ կարիք կա նաև նույն պայմաններն ապահովել համայնքի մյուս հատվածի համար:

Համայնքի մերօրյա առաջնահերթ խնդիրներից է նաև գյուղում կենտրոնացված կոյուղագծի բացակայությունը: Բնակիչներն իրենց ուժերով հիմնականում ապահովել են առանձին կոյուղահորերով, սակայն բնակիչների կոմունալ-կենցաղային պայմանների բարելավմանը էապես կնպաստեր միասնական կոյուղագծի աշխատանքը, ինչի իրագործումը միայն կապիտալ ներդրումային դաշտի և ֆինանսական կայուն

օժանդակության շնորհիվ ամբողջ ծավալով ծրագրի իրագործումը կհամարվի իրատեսական::

Համայնքի բազմաբնակարան շենքերը, որոնք բնակեցվածության բարձր մակարդակ ունեն, կարիք ունեն մասնագիտական լուրջ ուսումնասիրության՝ բնակիչների անվտանգությունը ռիսկի ենթարկելուց խուսափելու նպատակով:

Համայնքապետարանի շենքի վերանորոգման աշխատանքները պարբերաբար հետաձգվել են՝ գյուղում առկա այլ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման առաջնահերթություն տալով: Սակայն շենքի ներկայիս անմխիթար վիճակը ստիպում է քայլեր ձեռնարկել նաև դրա վերանորոգման հարցում: Նշված խնդրի կարգավորման կարևորությունը պայմանավորված է նաև համայնքապետարանի աշխատակիցների համար հարմարավետ աշխատանքային պայմաններ ապահովելուն, ինչը կնպաստի ոչ միայն աշխատակիցների աշխատանքի բարելավմանը և սպասարկման ոլորտի զարգացմանը, այլև կնպաստի համայնքապետարան –բնակիչ կապի ամրացմանը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| *Ուժեղ կողմեր* | *Թույլ կողմեր* |
|---|---|
| 1. Համայքնի ղեկավար-ավագանի բնակիչներ ամուր կապ և փոխհամաձայնեցում:<br>2. Պոտենցիալ մեծ ներուժ՝ ի դեմս համայնքի երիտասարդության:<br>3. Մայրաքաղաքին և հոգևոր կենտրոն Էջմիածնին մոտ լինելը (աշխարհագրական դիրք):<br>4. Մշտական Խմելու ջրով ապահովված լինելը:<br>5. Բնական գազով ապահովված լինելը:<br>6. Համացանցի հասանելիություն:<br>7. Համայնքում եկեղեցու առկայություն<br>8. Ակտիվ քաղաքականություն: | 1. Զբոսաշրջության համար հետքրքրություն առաջացնող վայրերի (պատմամշակութային կառույցների) բացակայություն:<br>2. Հանրային տրանսպորտի խնդիր:<br>3. Զբաղվածության նվազ պայմաններ (աշխատատեղերի սակավություն):<br>4.Ժամանցի և հանգստի կազմակերպման պայմանների անբավարարություն ( գրեթե բացակայություն):<br>5. Ոռոգման ջրի անբավարարություն:<br>6. Համայնքի գյուղատնտեսական հողերի բերքատվության ցածր մակարդակ:<br>7. Ցածր կենսամակարդակ:<br>8. Կապի և սպասարկման ոլորտն ապահովող շենքերի անբավարար վիճակ:<br>9 Փողոցների (ճանապարհների) ոչ բարվոք վիճակ:<br>10.Բազմաբնակարան շենքերի վթարայնություն: |

| *Հնարավորրություններ* | *Սպառնալիքներ* |
|---|---|
| 1. Գյուղատնտեսության ոլորտի զարգացում<br>2. Սպորտային և մշակութային ներուժ | 1. Բնական աղետներ<br>2. Բնակչության արտագաղթը |

# ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մուսալեռ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքերի իրականացման արդյունքում համայնքը անհատ ներդրողների և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ կունենա բնակչության կենսամակարդակի բարելավում, սոցիալ-տնտեսական մակարդակի բարձրացում, մշակութային աճ: Նշված աշխատանքների կատարման համար կարիք կլինի ներդնել 391 600 000 ՀՀ դրամ և արդյունքում կստեղծվեն մի քանի տասնյակ աշխատատեղեր: Համայնքը կսկսի կայուն զարգանալ, կավելանա բնակչի իրական եկամուտները, կկրճատվի աղքատությունը:

Նոր թաղամասերի, կենտրոնական փողոցների և գիշերային լուսավորության համակարգի արդիականացման, ներհամայնքային ճանապահների և փողոցների բարեկարգման՝ փոսալցման, ասֆալտապատման, նոր թաղամասերի գազիֆիկացման, սպորտդահլիճի վերանորոգման և կահավորման համայնքի բյուջեից առաջիկա հինգ տարիներին ակնկալվում է ներդնել 62.600.000 ՀՀ դրամ:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքի բնակիչների իրական եկամուտների 6%-ի աճ, իսկ ոռոգման համակարգի բարելավման, գյուղտեխնիկայի համալրման դեպքում գյուղատնտեսության արդյունավետությունը կբարձրանա 15%-ով: Համայնքի սեփական եկամուտների աճը՝ 6%:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ1

**«Փողոցների գիշերային լուսավորության համակարգի արդիականացում»**

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Փողոցների գիշերային լուսավորության համակարգի արդիականացում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 600 000 | 500 000 | 500 000 | 500 000 | 500 000 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 300 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 | 300 000 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.համապատասխան սարքավորումների ձեռքբերում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1. համապատասխան սարքավորումների տեղադրման և մոնտաժման աշխատանքներ<br>2.2.կատարված աշխատանքների արդյունքների փորձարկում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 600 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2 600 000 դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Փողոցների գիշերային լուսավորության համակարգի արդիականացում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքում գործող լուսավորության համակարգի արդիականացումը հնարավորություն կտա կրճատել ներկայիս էլեկտրաէներգիայի ծախսերի ծավալները՝ հնարավորություն ստեղծելով ներդրումներ կատարել գյուղում առկա մյուս խնդիրների համար | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ2

**«Սպորտդահլիճի վերանորոգում»**

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Սպորտդահլիճի վերանորոգում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>5 000 000</td><td>15 000 000</td><td>10 000 000</td><td></td><td></td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">1.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>3 000 000</td><td>7 000 000</td><td>4 000 000</td><td></td><td></td></tr>
<tr><td colspan="7">2.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>2 000 000</td><td>8 000 000</td><td>6 000 000</td><td></td><td></td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1.Շինության տանիքի մասնակի վերանորոգում<br>1.2. Շինության կապիտալ վերանորոգում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Մարզական գույքի ձեռքբերում</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 4 000 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 26 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 30 000 000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Նյութեր և սարքավորումներ, աշխատուժ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Սպորտդահլիճի վերանորոգում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչները</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Համայնքում առկա սպորտդահլիճի վերանորոգումը հնարավորություն կստեղծեր պատանիների և երիտասարդների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել առողջ ապրելակերպի ապահովման, ինչպես նաև համայնքում սպորտի զարգացման համար</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 3

## «Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 2 500 000 | 2 500 000 | 25 000 000 | 25 000 000 | 15 000 000 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1 500 000 | 1 500 000 | 12 500 000 | 12 500 000 | 7 500 000 |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1 000 000 | 1 000 000 | 12 500 000 | 12 500 000 | 7 500 000 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ավազ-խճաքարի ձեռքբերում<br>1.2. Ավազ-խճաքարի փռման աշխատանքների իրականացում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Ձյութի, մանրախճի, ավազի ձեռքբերում<br>2.2 Ասֆալտի փռում և ամրացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 3 500 000 դրամ,<br>Կապիտալ ծախսեր՝ 66 500 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 70 000 000 դրամ: | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և տեխնիկա, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | ,Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգումը բնակիչների համար կստեղծի առավել հարմարավետ կենսապայմաններ, կապահովի տրանսպորտային միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ4

## «Համայնքի գերեզմանատան տարածքի բարեկարգում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի գերեզմանատան տարածքի բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1 000 000 | 1 000 000 | | | |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 500 000 | 500 000 | | | |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 500 000 | 500 000 | | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Ջրատար խողովակների ձեռքբերում<br>1.2. Գերեզմանատան տարածքում ջրագծի անցկացում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Գերեզմանատուն տանող ճանապարհների փոսալցում, բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ,<br>Կապիտալ ծախսեր՝ 1 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 2 000 000 դրամ: | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և տեխնիկա, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի գերեզմանատան տարածքի բարեկարգում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի գերեզմանատան տարածքի բարեկարգումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն բնակչության հոգևոր և բարոյական արժեքների ամրապնդման համար, այլև սահմանված է օրենքով: | | | | | | |

## ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 5

**«Համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում»**

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | 2 000 000 | 2 000 000 | 2 000 000 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Մանկապարտեզի շենքի ընթացիկ վերանորոգում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Պահանջարկին համապատասխան գույքի ձեռքբերում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ,<br>Կապիտալ ծախսեր՝ 5 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 6 000 000 դրամ: | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և տեխնիկա, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչները | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Կրթության ոլորտը մշտապես գտնվում է զարգացման փուլում, իսկ օր օրի փոփոխվող պահանջները ստիպում են ձեռնարկել համապատասխան քայլեր՝: Համայնքապետարանն իր առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է համարում նախադպրոցական տարիքի երեխաների համար համապատասխան միջոցներն ու հնարավորություններն ապահովելը: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 6

**«Համայնքապետարանի շենքի վերանորոգում»**

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքապետարանի շենքի վերանորոգում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 2 500 000 | 3 000 000 | 3 000 000 | 3 000 000 | 3 500 000 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 2 000 000 | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 | 2 000 000 |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 500 000 | 2 000 000 | 2 000 000 | 2 000 000 | 1 500 000 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1. Շինության տանիքի վերանորոգում<br>1.2. Ներքին հարդարման աշխատանքների իրականացում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Ջեռուցման համակարգի անցկացում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 2 000 000 դրամ<br>Կապիտալ ծախսեր՝ 13 000 000 դրամ<br>Ընդհանուր բյուջեն՝ 15 000 000 դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և տեխնիկա, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքապետարանի շենքի վերանորոգում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքապետարանի շենքի վերանորոգումը միտված է աշխատակիցների համար աշխատանքային բարեկեցիկ միջավայրի ապահովմանը, համայնքի բնակչության սպասարկման բարելավմանը | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ7

## «Համայնքի զբոսայգու բարեկարգում և նոր խաղահրապարակի կառուցում»

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի զբոսայգու բարեկարգում և նոր խաղահրապարակի կառուցում | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 | |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 700 000 | 500 000 | 500 000 | 500 000 | |
| | 2. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 300 000 | 500 000 | 500 000 | 500 000 | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Համայնքի գործող զբոսայգում շատրվանի կառուցում<br>1.2 Զբոսայգու արահետների սալիկապատում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Խաղահրապարակի համար համապատասխան գույքի ձեռքբերում<br>2.2 Տարածքի հարդարում և գույքի տեղադրում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝ 1 000 000 դրամ,<br>Կապիտալ ծախսեր՝ 3 000 000 դրամ,<br>Ընդհանուր բյուջեն՝ 4 000 000 դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և պարագաներ, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի զբոսայգու բարեկարգում և նոր խաղահրապարակի կառուցում | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքում գործող զբոսայգու բարեկարգումը միտված է բնակիչների ազատ ժամանակի և հանգստի արդյունավետ կազմակերպմանը: Քանի որ համայնքի լայն սփռում ունի՝ կարիք է առաջանում նաև գյուղի մյուս հատվածում ստեղծել համապատասխան պայմաններ նաև երեխաների առօրյան կազմակերպելու համար: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 8

**«Օժանդակություն գազաֆիկացմանը»**

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Օժանդակություն գազաֆիկացմանը | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 | | |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 3. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 500 000 | 500 000 | 500 000 | | |
| | 4. | | | | | | |
| | Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | 500 000 | 500 000 | 500 000 | | |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Օժանդակություն համապատասխան նյութերի և ապրանքների ձեռքբերման հարցում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Օժանդակություն մոնտաժման աշխատանքերի իրականացման հարցում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 3 000 000 դրամ,<br>Ընդհանուր բյուջեն՝ 3 000 000 դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Նյութեր և պարագաներ, աշխատուժ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Օժանդակություն գազաֆիկացմանը | | | | | | |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ | | | | | | |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. | | | | | | |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքում մինչ օրս կան փողոցներ, որոնք ապահովված չեն գազաֆիկացմամբ, ինչը մեր օրերում կենսական կարևոր պայմաններից մեկն է: Գազաֆիկացմանն օժանդակություն ցուցաբերելը նպատակաուղղված է բնակիչների կենցաղային պայմանների բարելավմանը: | | | | | | |

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ9

## «Մշակույթի տան վերակառուցում»

(Ծրագրի անվանում)

<table>
<tr><td>Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="7">Մշակույթի տան վերակառուցում</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի անմիջական նպատակ</td><td colspan="7"></td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>2 000 000</td><td>62 000 000</td><td>62 000 000</td><td>62 000 000</td><td>62 000 000</td></tr>
<tr><td rowspan="8">Ծրագրի միջանկյալ արդյունքներ</td><td colspan="7">5.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>1 000 000</td><td>31 000 000</td><td>30 000 000</td><td>30 000 000</td><td>30 000 000</td></tr>
<tr><td colspan="7">6.</td></tr>
<tr><td rowspan="3">Ցուցանիշներ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="5">Թիրախային արժեքներ</td></tr>
<tr><td>2016</td><td>2017</td><td>2018</td><td>2019</td><td>2020</td><td>2021</td></tr>
<tr><td></td><td>1 000 000</td><td>31 000 000</td><td>32 000 000</td><td>32 000 000</td><td>32 000 000</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="7">1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.2 Շինության ամրացում<br>1.3 Տանիքի կառուցում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.2 Ներքին վերակառուցման աշխատանքներ</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="7">Ընթացիկ ծախսեր՝ 15 000 000 դրամ,<br>Կապիտալ ծախսեր՝ 235 000 000 դրամ,<br>Ընդհանուր բյուջեն՝ 250 000 000 դրամ</td></tr>
<tr><td>Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ</td><td colspan="7">Նյութեր և պարագաներ, աշխատուժ</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական ռիսկերը</td><td colspan="7">Մշակույթի տան վերակառուցում</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական շահառուները</td><td colspan="7">Համայնքի բնակիչներ</td></tr>
<tr><td>Ծրագրի սկիզբ և ավարտ</td><td colspan="7">2017-2021թթ.</td></tr>
<tr><td>Ծրագրի համառոտ նկարագրություն</td><td colspan="7">Չնայած որ նշված ծրագրի իրականացումը համայնքի բյուջեի սուղ միջոցներով իրատեսական չէ, այնուհանդերձ այս կարևորագույն շինության վերակառուցմանը չանդրադառնալը բացթողում կլիներ: Շինության վերակառուցումը մեծ խթան կհանդիսանար մշակութային կյանքի զարգացմանը, կստեղծեր նոր աշխատատեղեր, կծառայեր որպես կրթության, հանգստի և ժամանցի կազմակերպման օջախ:</td></tr>
</table>

# ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 10

## «Համայնքի գլխավոր հատակագծի մշակում»

(Ծրագրի անվանում)

| | |
|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի գլխավոր հատակագծի առկայության ապահովում |
| Ծրագրի անմիջական նպատակ | |

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | 3 000 000 | 3 000 000 | 3 000 000 |

Ծրագրի միջանկյալ արդյունքներ

7.

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | 1 500 000 | 1 500 000 | 1 500 000 |

8.

| Ցուցանիշներ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 |
| | | | | 1 500 000 | 1 500 000 | 1 500 000 |

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Համապատասխան ուսումնասիրությունների կազմակերպում<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Փաստաթղթի մշակման աշխատանքներ |
| Ծրագրի բյուջեն | Ընթացիկ ծախսեր՝<br>Կապիտալ ծախսեր՝ 9 000 000 դրամ,<br>Ընդհանուր բյուջեն՝ 9 000 000 դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի գլխավոր հատակագծի առկայության ապահովում |
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի բնակիչներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2017-2021թթ. |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը մեր օրերում կարևոր պայման է գյուղի զարգացման համար: Համայնքում կա շուրջ 152 հա բնակելի նշանակության հողեր, որոնց մի մասը դեռ կառուցապատված չէ: Գլխավոր հատակագիծը կապահովեր համայնքի կայուն և ճիշտ զարգացումը: |

# ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը:

Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում այն ունի հետևյալ պատկերը.

| հ/հ | եկամուտների տեսակը | 2016 փաստացի | 2017 նախատեսված | 2018 նախատեսված | 2019 նախատեսված | 2020 նախատեսված | 2021 նախատեսված |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ | 57257.8 | 58405.7 | 59672.1 | 61376.8 | 62577.5 | 63783.3 |
| $^{2}$ | եկամուտներ | 18179.0 | 19972.4 | 20172.1 | 20373.8 | 20577.5 | 20783.3 |
| $^{2}$.1 | Ընթացիկ եկամուտներ | - | - | - | - | - | - |
| 1. | Հարկային եկամուտներ | 17318.8 | 18232.0 | 18414.3 | 18598.4 | 18784.4 | 18972.2 |
| 1.1 | Հողի հարկ | 5649.3 | 6890.0 | 6958.9 | 7028.5 | 7098.8 | 7169.7 |
| 1.2 | Գույքահարկ | 11669.5 | 11342.0 | 11455.4 | 11596.9 | 11685.6 | 11802.5 |
| 1.3 | Եկամտահարկ | - | - | - | - | - | - |
| 1.4 | Այլ հարկային եկամուտներ | - | - | - | - | - | - |
| 2 | Տուրքեր | 280.5 | 932.3 | 941.6 | 951.0 | 960.5 | 970.1 |
| 2.1 | Պետական տուրքեր | - | - | - | - | - | - |
| 2.2 | Տեղական տուրքեր | 280.5 | 932.3 | 941.6 | 951.0 | 960.5 | 970.1 |
| 3 | Ոչ հարկային եկամուտներ | 579.7 | 808.0 | 816.2 | 824.4 | 832.6 | 841.0 |
| 3.1 | Համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վճարներ | 171.9 | 262.4 | 262.4 | 262.4 | 262.4 | 262.4 |
| 3.2 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | - | - | - | - | - | - |
| 3.3 | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչական | - | - | - | - | - | - |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | | |
| 3.4 | Տեղական վճարներ | 255.5 | 545.7 | 553.8 | 562.0 | 572.0 | 578.6 |
| 3.5 | Այլ ոչ հարկային եկամուտներ | 152.3 | - | - | - | - | - |
| | Եկամուտի կապիտալի գործառնություններից | - | - | - | - | - | - |
| | Պաշտոնական տրանսֆերտներ | 39078.8 | 38433.3 | 39500.0 | 41000.0 | 42000.0 | 43000.0 |
| | Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ դոտացիա/ | 39078.8 | 38433.3 | 39500.0 | 41000.0 | 42000.0 | 43000.0 |
| | Պաշտոնական կապիտալից տրանսֆերտներ դոտացիա/ | - | - | - | - | - | - |

## *ՀՀԶԾ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ*

Իրականացման փուլում գտնվող ծրագրերը պետք է մոնիթորինգի ենթարկվեն: Մոնիթորինգը կառավարչական գործիք է, որը հնարավորություն է տալիս հսկել ծրագրերի կատարման ընթացքը և անհրաժեշտ փոփոխություններ նախաձեռնել: Մոնիթորինգն իրականացվում է համապատասխան կատարողականի ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու և ցուցանիշների փաստացի արժեքները թիրախային արժեքների հետ համեմատելու միջոցով: Համեմատության միջոցով հնարավոր է լինում չափել ծրագրի առաջընթացը, հաջողության աստիճանը, ծրագրով պայմանավորված փոփոխությունները կամ գնահատել ծրագիրն իրականացնողի կատարողականը: Մոնիթորինգն, առաջին հերթին, անհրաժեշտ է համայնքի ղեկավարությունը, որպեսզի հնարավոր լինի ձեռքը պահել Ծրագրի «զարկերակի» վրա:

ՀՀԶԾ մոնիթորինգի պլանը ներկայացված է աղյուսակ N 1-ում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՔԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 11-Ի N 4 ՈՐՈՇՄԱՆ

ՍԽԵՄԱ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ

| ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ | ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ |
|---|---|
| Համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը | Յուրաքանչյուր տարի մոտ 400մ$^3$ |
| Սանիտարական մաքրման ենթակա տարածքներ | Համայնքի բոլոր բնակելի փողոցները |
| Սանիտարական մաքրման աշխատանքների ծավալներ | Պարտադիր և պարբերաբար իրականացնել աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահանջների պահպանմամբ: Աղբահանության աշխատանքները կազմակերպել շաբաթը մեկ անգամ: |
| Աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները | Կենցաղային և ոչ կենցաղային աղբը հավաքվում և տեղափոխվում է համայնքից: Աղբի փոխադրման իրականացումը պետք է կազմակերպվի՝ նվազագույնի հասցնելով շրջակա միջավայրի աղտոտումը: Սանիտարական մաքրման աշխատանքները և աղբի տեղափոխումը աղբավայր իրականացնել շաբաթը մեկ անգամ: |
| Անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջներ | Գազ 53 մակնիշի մեքենա |
| Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մքարման աշխատանքների ֆինանսավորումը | Համայնքի տարածքում իրականացվող աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների ֆինանսավորումը իրականացվում է համայնքի բյուջեից առանձին ծախսային ծրագրով: |

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 5

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքում 2017 թվականին ծնված յուրաքանչյուր երեխայի համար հուշագիր գնելու նպատակով տրամադրել 5000 դրամ և տալ դրամական օգնություն՝ 30 000 դրամ (պարտադիր համայնքում բնակվելու և ծնողներից որևէ մեկի գրանցման առկայության դեպքում):
2. 2017 թվականի ընթացքում համայնքի բոլոր զորացրվող բնակիչներին տրամադրել 20 000 դրամ:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի բնակչի մահվան դեպքում նրա ընտանիքին տալ 50 000 դրամ; Առանձին ծայրահեղ դեպքերում համայնքի ավագանու որոշմամբ կարող է տրամադրվել այլ չափի գումար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արծակման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 6

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, և հիմք ընդունելով Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N86-Ն որոշումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 11-ի N 5 որոշման առաջին, երկրորդ, երրորդ կետերով սահմանված դրամական օգնության գումարը, որը ֆինանսական սղության պատճառով չի տրամադրվել 2016 թվականին, թույլատրելու տրամադրել 2017 թվականին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | [signature] | ---------------- | ---------------- |

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ ________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11 » հունվարի 2017 թվականի N 7

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով սոցիալական օգնությունների տրամադրման հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում՝է.

1. Դրամական օժանդակություն ցուցաբերել հունվարի 8-ին հրդեհի պատճառով մահացած ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակիչ Գագիկ Համլետի Դավթյանի ընտանիքին՝ հուղարկավորության ծախսերի համար՝ տրամադրելով 135 000 դրամ:
2. Գումարը տրամադրել հանգուցյալի հորը՝ Համլետ Թամրազի Դավթյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |

ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՐԲԵԿՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamayng@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունվարի 2017 թվականի N 8-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N81-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ««Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի նոյեմբերի 16-ի օրենքով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի վարչական տարածքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N81-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (9) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |

ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ԱՌԱՔԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ ---------------- ---------------- ----------------
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ ---------------- ---------------- ----------------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11 N 8-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինարարությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է դրույքաչափի 0.5 գործակցի կիրառմամբ՝

Հիմնական շենքերի և շինությունների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) Սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15 000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ

դ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.

Ոչ հիմնական շենքերի և շինությունների տեղադրման համար՝

3) Մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 1 500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2 500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար կիրառել 0.5 գործակիցը, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1 500 /մեկ հազարա հինգ հարյուր/ դրամ.

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այն կառույների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

4) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2 500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է օրենքով սահմանված տուրքի առավելագույն արժեքի նկատմամբ 0.3 գործակցի կիրառմամբ՝

4. 1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 000 /երեք հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 900 /երեք հազար ինը հարյուր/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 /վեց հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 500 / տասներեք հազար հինգ հարյուր/ դրամ,

գ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 300 7 երեսուն հազար երեք հարյուր/ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 / երեք հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3 900 / երեք հազար ինը հարյուր/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 / վեց հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13 500 / տասներեք հազար հինգ հարյուր/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 300 /երեսուն հազար երեք հարյուր/ դրամ:

5. Համայնքի տարածքում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանում է 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

6. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար 0,75 գործակցի կիրառմամբ օրացուցային տարվա համար սահմանվում է 150 000 / մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 60 000 /վաթսուն հազար/ դրամ:

8. Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է օրենքով սահմանված տուրքի առավելագույն արժեքի նկատմամբ 0.3 գործակցի կիրառմամբ՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3 000 /երեք հազար/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3 900 /երեք հազար ինը հարյուր/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6 000 /վեց հազար/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 13 500 /տասներեք հազար հինգ հարյուր/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30 300 /երեսուն հազար երեք հարյուր/ դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 /երեք հարյուր/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 /վեց հարյոր/ դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 200 /մեկ հազար երկու հարյուր/ դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 400 /երկու հազար չորս հարյուր/ դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ:

9. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու համար թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 50 000 /հիսուն հազար/ դրամ:

10. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

1) Առևտրի օբյեկտների համար՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ.
2) Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.
3) Բաղնիքների /սաունաների/ համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
4) Խաղատների համար՝ 1 000 000 /մեկ միլիոն/ դրամ.
5) Շահումով խաղերի համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.
6) Վիճակախաղերի համար՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ դրամ.

11. Ավագանու կողմից սահմանված կարգին և պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում

տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամսվա համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 / երկու հազար/ դրամ.

2) Թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 500 / երեք հազար հինգ հարյուր/ դրամ.

3) Սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ,

4) Այլ արտաքին գովազդի համար՝ 1500 / հազար հինգ հարյուր/ դրամ.

5) Դատարկ գովազդային վահանակների համար՝ 375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ դրամ

6) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ:

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը 0,5 գործակցի կիրառմամբ օրացույցային տարվա համար սահմանել 50 000 /հիսուն հազար/ դրամ:

13. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը 0,5 գործակցի կիրառմամբ օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է 3 000 /երեք հազար/ դրամ:

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման /կամ/ մատուցման թույլտվության համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

Տեղական վճար է սահմանվում.

1. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար սահմանվում է փոխհատուցման վճար՝ 1 000 /մեկ հազար/ դրամ:

2. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, , բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

4. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

5. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի /փաթեթի/ նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

6. Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին /վերնիսաժներին/ մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3 000 /երեք հազար/ դրամ:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ս. Առաքելյան